«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Գոյականի հոլովների ուսուցումը
ԱՌԱՐԿԱ	Հայոց լեզու
ՀԵՂԻՆԱԿ	Կիմա Համբարձումի Ադամյան
ՄԱՐԶ	Երևան
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	«Հայ-չինական բարեկամության դպրոց» հիմնադրամ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն 3

Գլուխ 1 Գոյականի հոլովի քերականական կարգը 4

Գլուխ 2. Հոլովների ուսուցումը 5
2.1. Ուղղական հոլովի ուսուցումը ……..……6
2.2. Սեռական հոլովի ուսուցումը ……7
2.3. Տրական հոլովի ուսուցումը ……..……..9
2.4. Հայցական հոլովուսուցումը ……..……10
2.5. Բացառական, գործիական, ներգոյական հոլովների ուսուցումը……....……..13

Եզրակացություն 19

Օգտագործված գրականության ցանկ 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը:

21-րդ դարը զարգացումների,ձեռքբերումների ժամանակահատված է:Հասարակության առաջընթացի համար կարևոր է համակողմանիորեն զարգացած անհատի ու քաղաքացու ձևավորումը,որը հնարավոր է մայրենի լեզվի կայուն և խոր իմացության շնորհիվ:Գաղտնիք չէ,որ անգամ օտար լեզուներ սովորելու համար պետք է տիրապետել մայրենի լեզվին ու գրականությանը,որոնց միջոցով էլ տեղի է ունենում բազմակողմանիորեն զարգացող անհատի ձևավորումը: Սակայն չպետք է հենվել միայն տեսական նյութի յուրացման վրա,այլ պետք է շաղկապել տեսականն ու գործնականը՝ գեղեցիկ,հարուստ,գրական խոսք ձևավորելու,անսխալ շարադրելու և միտքը հստակ ձևակերպելու համար: Ուսուցչի նպատակը պետք է լինի նյութի մատչելի և ընկալելի մատուցումը,որը կիրականցվի բազմաթիվ մեթոդների և հնարների ,միջառարկայական կապերի միջոցով:

Լեզվի ուսուցման կարևորագույն բաժիններից է «Ձևաբանությունը»,սակայն քերականության ուսուցումը պետք է միտված լինի քերականական ձևերը խոսքում ճիշտ կիրառելուն,այլ ոչ թե առանց հասկանալու անգիր անելուն:

Ժամանակակից խոսքի մասերի համակարգում գոյականի հատուկ ձևակազմական փոփոխություններից մեկը հոլովման համակարգն է, որը կոչվում է հոլովական հարացույց:

Հետազոտական աշխատանքի նպատակն է անդրադառնալ գոյականի հոլովի քերականական կարգին,դրանց դասավանդման մատչելիությանն ու սովորողների կողմից գիտելիքների յուրացմանը,բանավոր և գրավոր խոսքի զարգացմանը,հաղորդակցության ընթացքում լեզվական միջոցների կառույցների,լեզվական օրինաչափությունների և կանոնների գիտակցմանը, հոլովների շարահյուսական գործառույթի ուսուցմանը,հոլովների քերականական իմաստի և կիրառության,հոլովման հետ կապված հնչյունափոխությանը:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից,երկու գլուխներից և հինգ ենթագլուխների,եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Վերջնարդյունքը՝

1.Սովորողը պիտի կարողանա ձեռք բերված գիտելիքները կիրառի բանավոր և գրավոր գրագետ խոսք կառուցելիս

2.Գտնի և օգտագործի հոլովական համակարգի օրինակներ տարբեր աղբյուրներից

3.Հիմանավորի պատասխանները օրինակներով

ԳԼՈՒԽ 1. ԳՈՅԱԿԱՆԻ ՀՈԼՈՎԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Գոյական խոսքի մասին դպրոցականները ծանոթ են դեռևս ցածր դասարաններից,նրանք գիտեն՝գոյականները նախադասության մեջ ենթարկվում են փոփոխությունների,ուստի գոյականին տալիս են «ձևափոխված» հարցեր:

7-րդ դասարանում նախնական գիտելիքը խորացվում է. հոլովների ուսուցման գործընթացը տարվում է որոշակի փուլերով,ինչը պայմանավոված է նյութի ուսումնասիրման նպատակով:Այսինքն՝ուսումնասիրվում է գոյականի ձևը, հոլովի իմաստը,այնուհետև հոլովի շարահյուսական գործառույթը:Այստեղ կարևորվում է նյութի մատուցման մեթոդներն ու եղանակները:

Գոյականի բոլոր հոլովների ուսուցումը առավել արդյունավետ է դառնում,երբ այն իրականացվում է նախադասությունների միջոցով:Համեմատելով միևնույն բառի ձևային փոփոխությունները՝սովորողը հանգում է որոշակի եզրակացության.միևնույն բառը կարող է տարբեր ձևերով հանդես գալ,բայց դրանից բառն իր իմաստը չի փոխում:

Օրինակ՝

1.**Տետրը (ի՞նչը)**դրված է սեղանին:

2.**Տետրի (ինչի՞)** կազմը պոկվել է:

3.Երեխան նայեց **տետրին: (ինչի՞ն):**

4.Մայրիկը գնեց մի քանի **տետր(ի՞նչ):**

5.**Տետրից(ինչի՞ց)** թուղթ պոկեցի:

6.**Տետրով (ինչո՞վ)** նա հարվածեց ինձ:

7.Կարևոր մտքերը գրեցի **տետրում(ինչո՞ւմ):**

Սակայն սովորողը հանգում է մի այլ եզրակացության.նույն բառը պատասխանում է տարբեր հարցերի,հետևաբար ունի տարբեր շարահյուսական պաշտոններ,նույնիսկ այն բառերը,որոնք ձևով նման են,կատարում են տարբեր պաշտոններ: Աշակերտները դիտարկելով նմանատիպ օրինակներ՝ բացահայտում են հոլովների առանձնահատկությունները:

Սովորողները հոլովի առանձնահատկություններին‹‹մոտենում են›› քայլ առ քայլ, դիտումների,վերլուծությունների և համեմատությունների միջոցով:Հոլովների հետ կատարված աշխատանքները նպատակային են,բնույթով՝գործնական:Սովորածը

ամրակայվում է տարաբնույթ վարժությունների կատարումով:Մինչև յուրաքանչյուր հոլովին առանձին-առանձին անդրադառնալը սովորողին գաղափար է տրվում հոլովման մասին՝որպես համակարգի:

Հոլովման երևույթը առավել ընկալելի դարձնելու համար ուսուցիչը նախադասության մեջ փոփոխում է անձ և իր ցույց տվող երկու գոյական :

ԱՆՁ	ԻՐ
1.**Տատիկը** մուրաբա պատրաստեց:	1.**Դարակը** կոտրվեց:
2.**Տատիկի** ակնոցը կոտրվեց:	2.Նա **դարակի** մեջ թղթեր դրեց:
3.Անծանոթը մոտեցավ **տատիկին:**	3.Ես նայում էի պահարանի **դարակին:**
4.Ես սիրում եմ **տատիկին:**	4.Տղան **դարակը** կոտրեց:
5.**Տատիկից** նվեր ստացա:	5.**Դարակից** թղթեր հանեց:
6.Ես հպարտանում եմ իմ **տատիկով:**	6.Ծալովի **դարակով** պահարան գնեցի:
7……	7.Մատանին դրեց **դարակում:**

Սովորողները կատարում են դիտարկում: Համեմատելիս ուշադրություն են դարձնում **տատիկին/4/ և դարակը/4/** ձևերին,որոնք ունեն միևնույն շարահյուսական դերը,սակայն ձևով տարբեր են,իսկ **դարակում/7/** գոյականի զուգահեռ ձևը բացակայում է:

Այստեղ կարևորվում է նաև սովորողների հարցադրման կարողությունները:

Ելնելով վերոնշյալից՝տրվում է սահմանումը՝

Նախադասության մեջ գոյականի գործածության ձևերից յուրաքանչյուրը կոչվում է հոլով,իսկ նրա բոլոր ձևափոխությունները միասին՝հոլովում:[1]

Գիտելիքի ամրակայման համար հանձնարարվում է կազմել նախադասություններ՝ փոփոխելով *գիրք* և *բժիշկ* գոյականները:

2.1. Ուղղական հոլովի ուսուցումը

Ուղղական հոլովի ուսուցումը 7-րդ դասարանում անցածի կրկնություն է,որը պահանջում է գիտելիքի խորացում:Ցածր դասարանում սովորողը գիտի,որ ենթական դրվում է

ուղղական հոլովով.այն բառի ուղիղ ձևն է:Սակայն միջին դպրոցում ենթակային ավելանում է ստորոգյալի մաս կազմող բառ,կոչական,գոյականական անդամի լրացումներ եզրույթները: Քանի որ ուղղական հոլովը բառի ուղիղ ձևն է,ուստի ուղղական հոլովի ձևը և քերականական իմաստը դիտարկելու համար ուսուցիչը գրատախտակին գրում է նախադասություններ, որոնցում ուղղականով դրված գոյականը շարահյուսական տարբեր պաշտոններ է կատարում:

Աղբյուրները հնչում են ու անց կենում,

Ծարավները տենչում են ու անց են կենում,

Ու երջանիկ ակունքներին երազուն՝

Պոետները կանչում ու անց են կենում: **:** / Հ.Թ./-ենթակա

Կոչական

Արա՛մ,մի՛ քայլիր այդ ճանապարհով:

Հե՞յ,**ճամփանե՛ր,ճամփանե՛ր.**

Անդարձ ու հին ճամփաներ,

Ովքե՞ր անցան քեզանով,

Ուր գնացին, **ճամփանե՛ր:** / Հ.Թ./

–Ի՞նչ էլ լինի**, քո՛ւյր** իմ, **քո՛ւյր**, հեռանալիս չանիծես

Խե՞ղճ կարոտը թևերիս, որ երբե՞ք քեզ չհասան…/Ե.Չ./

Ստորոգյալ կազմող բառ

Այդ փոշոտ ճանապարհով քայլողն **Արամն** է:

Ասում են՝ ուռին **աղջիկ** էր ինձ պես:: / Հ.Թ./

Քանի որ աշակերտները ծանոթ են ենթակային,կոչականին և ստորոգելիին,ապա ուսուցիչը ուսուցիչը հանձնարարաում է որոշել կոչականի արտահայտման ձևը(կոչականը անորոշ առումով է գործածվում,նախադասության մյուս անդամներից առանձնացված է ստորակետով,ունի հուզարտահայտչական երանգավորում):

Ենթակայի պարագայում սովորողները նկատում են,որ ստորոգյալները և ենթակաները համաձայնվում են թվով:Գիտելիքը ամրակայելու համար ուսուցիչը հանձնարարաում է կազմել նմանօրինակ նախադասություններ:Ենթաբաժինն ամփոփվում է ստուգիչ հարցերով և տարաբնույթ վարժություններով:

2.2. Սեռական հոլովի ուսուցումը

Սեռական հոլովը ցույց է տալիս այն առարկան, որին պատկանում կամ վերաբերում է,որից սերում է որևէ բան:[2]Սեռական հոլովը պատասխանում է ***ո՞ւմ, ինչի՞, ինչերի՞*** հարցերին և չի կապվում բայի հետ,այլ դառնում է գոյականական կամ գոյականաբար գործածված անդամի հետ:Սեռական հոլովով դրված գոյականը նախադասության մեջ կատարում է հատկացուցչի պաշտոն:Սեռական հոլովը որոշիչ հոդ չի ստանում:Լինում է վերջավոր և անվերջավոր:

Վերոբերյալը ավելի հասկանալի դարձնելու համար ուսուցիչը հանձնարարաում է տրված հատվածից դուրս են գրել սեռական հոլովով գործածված գոյականները իրենց լրացումների հետ :

Ես իմ անուշ **Հայաստանի** արևահամ բառն եմ սիրում,
Մեր հին **սազի** ողբանվագ, լացակումած լարն եմ սիրում,
Արևանման **ծաղիկների** ու **վարդերի** բույրը վառման
Ու նաիրյան **աղջիկների** հեզաճկուն պարն եմ սիրում:
Իմ կարոտած **սրտի** համար ոչ մի ուրիշ հեքիաթ չկա,
Նարեկացու, **Քուչակի** պես լուսապսակ ճակատ չկա,

Աշխարհ անցիր, **Արարատի** նման ճերմակ գագաթ չկա,
Ինչպես անհաս **փառքի** ճամփա՝ ես իմ Մասիս սարն եմ սիրում։

Սովորողները նկատում են ,որ գոյականները ստանում են –ի վերջավորությունը,սակայն ոչ միշտ։Սեռական հոլովը կազմվում է նաև -ոջ,-վա,-ց,-ան ,-ու արտաքին հոլովիչների (վերջավոր) և -ա-,-ո- ներքին հոլովիչների օգնությամբ(անվերջավոր)։Քանի որ «Հոլովումներ»բաժինը հանված է 7-րդ դասարանի դասընթացից,հետևաբար սեռական հոլովն ուսումնասիրելիս ուսուցիչը պիտի կարևորի հոլովիչների դերը սեռականը կազմելիս։

	Ուղղական հոլով	Սեռական հոլով/եզ.թիվ/	Սեռական հոլով/հոգ.թիվ/
1	Վարդ	Վարդ**ի**	վարդեր**ի**
2	Այգի	այգ**ու**	այգիներ**ի**
3	Ընկեր	Ընկեր**ոջ**	Ընկերներ**ի**
4	ժամ	ժամ**վա**	ժամեր**ի**
5	շարժում	շարժմ**ան**	շարժումներ**ի**
6	Հայկենք	Հայկեն**ց**/հավաք.գոյ./	-
7	մայր	մ**ո**ր	մայրեր**ի**
8	վարժություն	վարժությ**ա**ն	վարժություններ**ի**

Հետևելով աղյուսակին `աշակետները փորձում են օրինաչափություններ գտնել ։

Սեռական հոլովի ոճական նրբերանգներին անդրադառնալիս ուսուցիչը զուգադրում է սեռականով արտահայտված որոշիչ-որոշյալ կապակցությունները և հարաբերական ածական- ներով կազմված բառակապակցությունները`ընդգծելով,որ առաջին տարբերակը խոսքային է, իսկ 2-րդը գրական լեզվին է բնորոշ։

1-ին խումբ	2-րդ խումբ
Փայտի գդալ	փայտյա գդալ
Աշնան անձրև	աշնանային անձրև
Գործի մարդ	գործունյա մարդ

Սովորողների խոսքը հարստացնելու նպատակով ուշադրություն պետք է դարձնել սեռական հոլովով կիրառված փոխաբերական կայուն և ոչ կայուն կապակցություններին`դարձվածքներին։

Օրինակ`կոկորդիլոսի արցունքներ,արջի ծառայություն,ագռավի ճուտ,Քրիստոսի տանջանք և այլն։

Սեռական հոլովը ուսուցանելուց հետո գիտելիքները ամրակայելու համար կատարվում են մարզողական աշխատանքներ։

2.3.Տրական հոլովի ուսուցում

Տրական հոլովն ուսումնասիրելիս պետք է ուշադրություն դարձվի սեռական և տրական հոլովների արտաքին նմանությանը՝չմոռանալով,որ տրական հոլովը դառնում է հիմնականում բայական անդամի լրացում՝հանգման և մատուցման անուղղակի խնդիր։Երբ ուսուցիչը համոզվում է,որ սովորողները հասկացել են հաղորդման,մատուցման և հանգման իմաստները,նա բացատրում է՝տրական հոլովով են դրվում ժամանակի,տեղի,նպատակի պարագաները։Օրինակ՝

Իրիկնապահին թփերն օրորող հովի պես թեթև

Մի ուրու անցավ,մի գունատ աղջիկ ճերմակ շորերով…./Վ.Տ./

Բազմած լուսնի նուրբ շողերին,հովի թևին թռչելով՝

Փերիները սարի **գլխին** հավաքվեցին գիշերով։/Հ.Թ

Նրանք գնացին այգի՝**կութի։**

1.Քանի որ տրական և սեռական հոլովների իմաստային առանձնահատկությունները դրսևորվում են հատկապես շարահյուսական մակարդակում,ուստի ուսուցիչը պիտի աշակերտների ուշադրությունը բևեռի նախադասությունների վրա ։

2.Տարբերակման ձև կարելի է համարել նաև ը ,ն որոշիչ հոդերի կիրառումը՝

Օր.՝ **Աղջկա** վարսերը ծածանվում էին քամուց։/**սեռական հոլ.**/

Ծաղիկները նվիրեց **աղջկան։/տրական հոլ.**/

Տրական հոլովը անորոշ է ,եթե անորոշ դերանուն է կիրառվել։Օրինակ՝

Ծաղիկները նվիրեց **մի աղջկա։/տրական հոլ.**/

Տրական հոլովը ուսուցանելուց հետո պետք է ստուդվի յուրացումը և կատարվեն ամրակայող վարժություններ։

- Կազմել գոյականների հարացույցներ
- Գեղարվեստական գրականությունից դուրս գրել տրական հոլովով գործածված գոյականներ և այդ գոյականների սեռական հոլովով կազմել նախադասություններ

- Ընտրովի թելադրությունից դուրս գրել տրական հոլովով գործածված գոյականներ

2.4. Հայցական հոլովի ուսուցումը

Հայցական հոլովն ունի որոշակի առանձնահատկություններ.իրանիշ գոյականների դեպքում նման է ուղղականին,անձնանիշ գոյականի դեպքում՝տրականին։Այստեղից եզրակացություն՝հայցասկան հոլովի իմաստը գլխավորապես պայմանավորված է նրա գործառույթով[2:]Հետևաբար այս հոլովն ավելի դժվար է յուրացվում սովորողների կողմից։

Հայցական հոլովը կապվում է ներգործական սեռի բայի հետ և ցույց է տալիս այն առարկան ,որն իր վրա կրում է ենթակայի կատարած գործողությունը։Այստեղից էլ պիտի եզրակացնել,որ հայցական հոլովով դրվում են բայական անդամի լրացումները առավելապես ուղիղ խնդիրը։Հետևաբար այս հոլովի ուսուցումը նպատակահարմար է իրականացնել նախադասություններով։Սակայն պետք է հիշել,որ հայցական հոլովով կարող են կիրառվել նաև մի շարք պարագաներ՝տեղի,ժամանակի,չափ ու քանակի։

Սակայն այս հոլո վի յուրացումը դժվարացնում է այն,որ սովորողները դեռ չգիտեն բայի սեռը,ենթական և ուղիղ խնդիրը իրարից չեն տարբերում,բացի այդ՝շփոթություն է առաջացնում հայցականի նմանությունը տրական և ուղղական հոլովներին։

Շփոթմունքից խուսափելու համար ուսուցիչը գրատախտակին գրում է նախադասություններ և առաջարկում դրանք համեմատել իրար հետ։

Քամին օրորում էր **թփերը**։ **Թփերը** տերևաթափվել էին։

Երբ սովորողները կարդում են երկրորդ նախադասությունը,նրանք անմիջապես ասում են՝ընդգծված բառը ենթակա է,քանի որ գործողություն կատարողն է,պատասխանում է *ինչե՞ր* հարցին։Իսկ առաջին նախադասության մեջ **թփերը** գոյականը այն առարկան է,որն անմիջապես իր վրա կրում է ենթակայի կատարած գործողությունը,պատասխանում է ինչե՞ր հարցին,դրվում է հայցական հոլովով։ Ուսուցիչը սովորողների ուշադրությունը հրավիրում է **օրորել/ի՞նչը,ո՞ւմ**/ բայի արտահայտած իմաստի վրա։

Հայցական հոլովի իմաստի,շարահյուսական գործառույթի յուրացումը ստուգելու համար կարելի է հանձնարարել գեղարվեստական գրականությունից դուրս գրել նախադասություններ ,որոշել գոյականների հոլովները:Նմանատիպ առաջադրանքները ապահովում են միջառարկայական կապը,սովորողին մղում են ինքնուրույն մտածելու և վերլուծելու:

Հայցական հոլովն ուսումնասիրելիս ուսուցիչը անդրադառնում է անձի և իրի առումներին՝նշելով,որ անձնանիշ գոյականը կարող է կիրառվել իրի առումով.այդ դեպքում հայցականը ուղղականաձև է.օրինակ՝

Ես ունեմ երկու քույր/ի՞նչ/:

Շատ կարևոր է՝ աշակերտները իմանան,որ անձնանուններն փոխանվանաբար կիրառվելիս դրվում են ուղղականաձև հայցականով:

Օրինակ՝

Ես սիրում եմ Դուրյան /ի՞նչ/կարդալ:

Հայցականով դրված ուղիղ խնդիրն ուսումնասիրելուց հետո սովորողները վարժվում են հայցական հոլովի մյուս կիրառություններին՝տեղի պարագա,ժամանակի պարագա,չափ ու քանակի պարագա:

1.Հնձվորները հասան **դաշտ**/ո՞ւր/:

2.Այսօր նա **երեք կիլոմետր** քայլել է:/ինչքա՞ն/

3.Ճամփորդները միայն **գիշերը** տեղ հասան:/ե՞րբ/

Առաջին օրինակում տեղի պարագա է,երկրորդում՝չափ ու քանակի,իսկ երրորդում՝ժամանակի:

Ենթաթեման ամփոփվում է բանավոր հարցերով,կատարվում են ամրակայող վարժություններ:

Քանի որ 7-րդ դասարանում կիսամյակի ընթացքում նախատեսվում է գործնական աշխատանք,ապա կարելի է կազմակերպել խմբային աշխատանք համագործակցային մեթոդով,որը նպատակահարմար է գործածել գիտելիքների ամրակայման նպատակով: Խմբային հետազոտությունը հնարավորություն է տալիս սովորողներին կենտրոնանալ առաջադրված խնդրին՝գործածելով ունեցած գիտելիքները:

Դասարանը բաժանվում է խմբերի `3 կամ 4,յուրաքանչյուրը ստանում է առանձին առաջադրանք,որը վերահսկվում է ուսուցչի կողմից:

1-ին խումբ՝

1.Տրված բնագրում առանձնացնել ուղղական և հայցական հոլովով դրված գոյականները

2.Տրված բառերով կազմել նախադասություններ՝դրանք գործածելով ուղղական և

հայցական հոլովներով

Վենի դիագրամով համեմատել նմանություններն ու տարբերությունները։

Ուղղական հոլով



Հայցական հոլով

2-րդ խումբ

1.Տրված բնագրում առանձնացնել սեռական և տրական հոլովով դրված գոյականները։

2.Տրված բառերով կազմել նախադասություններ՝դրանք գործածելով սեռական և տրական հոլովներով։

Վենի դիագրամով համեմատել նմանություններն ու տարբերությունները։

Սեռական հոլով



Տրական հոլովով

3-րդ խումբ՝

1.Տրված բնագրում առանձնացնել տրական և հայցական հոլովով դրված գոյականները

2.Տրված բառերով կազմել նախադասություններ՝դրանք գործածելով տրական և հայցական հոլովներով:

Վենի դիագրամով համեմատել նմանություններն ու տարբերությունները:

13.

Խմբերը գնահատում են միմյանց աշխատանքը:

Տրական հոլով Հայցական հոլով



Այս մեթոդը կիրառելիս որպես ուսումնական նյութ կարող են ծառայել քարտերը,տարաբնույթ աղյուսակները,դիագրամները և այլն:

2.5 Բացառական, գործիական և ներգոյական հոլովների ուսուցումը

Ինչպես գիտենք,հաղորդակցության մեջ սովորաբար տպավորվում է հաղորդակցման սկիզբն ու վերջը,առավել ևս եթե խոսքը դպրոցականների մասին է: Դասի սկզբում սովորողի ուշադրությունը գրավելուն կարող են նպաստել մի քանի հնարներ՝ խորհրդավորությունը,գուշակությունը,անսպասելիությունը:

Այդ նպատակով բացառական հոլովն ուսումնասիրելիս ուսուցիչը առաջարկում է գտնել այն գոյականները ,որոնք դրված են նույն հոլովով `հենվելով արտաքին նմանության վրա:

1.**Անտառից** եկած կանաչ եղևնին,

Հիշում է կանաչ իր ընկերներին…

2. Գնացքները այս կողմերում գնում էին **արևելքից** արևմուտք և արևմուտքից արևելք...

Արևից առաջ և **ոսկուց** առաջ-
Տրտում է այնքան.
Խմում է հոգին բաժակը երազ
Այդ կույս տրտմության:

4.**Քաղաքներից ու գյուղերից, ստեպներից** հեռու ու մոտ՝
Եկել էին նրանք նորից՝ հուսավառված ու կրակոտ:

5.Ամայի փողոցում մի փոքրիկ շուն կուչ էր եկել մի փակ դռան առջև,սրթսրթում էր ցրտից:

6. **Կեսօրից** հետո սպասվում են տեղումներ:

Սովորողները առանձնացնում են –ից և -ուց վերջավորությամբ գոյականները.այնուհետև ուսուցչի առաջարկով որոշում են՝ինչ իմաստներ է արտահայտում՝տեղի,ժամանակի,պատճառի և այլն:

Տրվում է բացառական հոլովի սահմանումը:Բացառական հոլովը ցույց է տալիս այն առարկան ,որից ծագում ,սերում ,սկսվում է գործողությունը:

Բացառական հոլովը պատասխանում է ումի՞ց,ինչի՞ց,որտեղի՞ց,երբվանի՞ց հարցերին:

Բացառական հոլովը կազմվում է ուղղական կամ սեռական հոլովաձևերին ավելացնելով

-ից կամ –ուց վերջավորությունները:-Ուց վերջավորությունը ստանում են –ու հոլովման ենթարկվող բառերը:Սովորողները իրենք են բերում օրինակներ գեղարվեստական գրականությունից կամ ինքնուրույն կազմում են նախադասություններ:

Գործիական հոլովը ցույց է տալիս այն առարկան ,որի միջոցով կամ որով կատարվում է

գործողությունը։Այն ունի –ով և -բ վերջավորությունները։Պատասխանում է ումո՞վ,ինչո՞վ,

ո՞ւմ միջոցով։Գործիական հոլովով դրվում են միջոցի անուղղակի խնդիրը,

ձևի պարագան,հիմունքի պարագան և այլն։

Ներգոյական հոլովը ցույց է տալիս այն առարկան կամ տեղը,որի մեջ տեղի է

ունենում գործողությունը։Պատասխանում է որտե՞ղ,ինչու՞մ հարցերին։

Ներգոյական հոլովով դրվում տեղի և ժամանակի պարագաները։

Գիտելիքները ակտիվացնելու համար կարելի է հանձնարարել քարտային անհատական աշխատանք՝պահանջելով տեքստից դուրս գրել բացառական,գործիական և ներգոյական հոլովներով գործածված գոյականները,փակագծում գրել տրվող հարցը,որոշել շարահյուսական պաշտոնը։Այս առաջադրանքի միջոցով սովորողները վերհիշում են ցածր դասարաններում անցածը,ամրակայում են գիտելիքները։

Նմանատիպ առաջադրանքի միջոցով սովորողները վերհիշում են ցածր դասարաններում անցած նյութը ,ամրակայում են գիտելիքները։

Այս ընդհանուր բնորոշումներից հետո ուսուցիչը պետք է երեխայի ուշադրությունը կենտրոնացնի հոլովների կազմության մի շարք օրինաչափությունների վրա,որոնք սովորողին կօգնեն խոսքը ճիշտ կազմելուն,գրական հայերենը բարբառայինից տարբերելուն։

Շատ հաճախ լսում ենք առուից,ամառից կամ դստերից սխալ կազմությունները,որոնք բարբառների,ինչպես նաև բառերի սխալ կիրառությունների հետևանք են։Նմանատիպ սխալները բացառելու համար ուսուցիչը սովորողներին ներկայացնում է մի շարք օրինաչափություններ,որոնք նրան կօգնեն բացառել նման սխալները։

Օրինչափություն 1. Մի շարք բառերում բառավերջի **ու-**ն դառնում է **վ:** Օրինակ՝

Բու-բվից կամ բուից,լու-լվից,ձու-ձվից,կկու-կկվից,առու-առվից։

Օրինչափություն 2. Մի շարք գոյականներ,ուոնք սեռականում ունենում են **ու** հոլովիչը,բացառականում ստանում են –ուց վերջավորությունը։

Օրինակ՝անկողին–անկողնուց,ձի-ձիուց,մարդ–մարդուց,բարդի-բարդուց,ուղի-ուղուց,

բացառություն է սեր (զգացմունք) -սիրուց գոյականը։

Օրինչափություն 3. Ոջ հոլովման ենթարկվող գոյականների բացառական հոլովը կազմվում է սեռական հոլովից:

Օրինակ՝տալ-տալոջ-տալոջից//տալից-տալից,քույր-քրոջ-քրոջից,կին-կնոջ-կնոջից,աներ-աներոջ-աներոջից և այլն:

Օրինչափություն 4.Ո ներքին հոլովման բացառականը ևս կազմվում է սեռական հոլովից:

Օրինակ՝ եղբայր-եղբոր-եղբորից,մայր-մոր-մորից,հայր-հոր-հորից:

Օրինաչափություն 5.Ա ներքին հոլովման ենթարկվող գոյականների բացառականը կազմվում ուղղական հոլովից:

Օրինակ՝անուն–անունից,երջանկություն-երջանկությունից,անկյուն-անկյունից,արյուն-արյունից:

Օրինաչափություն 6.Վա արտաքին հոլովմանբացառականը կազմվում է տրական հոլովից:

Օրինակ՝տարի-տարվան-տարվանից,նաև՝տարուց,օր-օրվան-օրվանից:Սակայն պետք է հաշվի առնել,որ բանավոր խոսքում մենք օգտագործում ենք կրճատ տարբերակը՝օրից,առավոտից և այլն:

Օրինաչափություն 7. Ան արտաքին հոլովման պատկանող գոյականների բացառականը կազմվում է սեռական հոլովից,բացառություն են տարվա եղանակներ մատնանշող գոյականները,որոնք կազմվում են տվյալ գոյականների սեռական հոլովից՝աշուն-աշնան-աշնանից,ամառ-ամռան-ամռանից,ձմեռ-ձմռան-ձմռանից,գարուն-գարնան-գարնանից:

Թեման ամփոփելիս կարելի է հանձնարարել կազմել հոլովների հարացույցը,որը միտումնավոր կերպով կարելի է կրկնել:Աշակերտը այսպես կարող է ավելի հեշտ մտապահել և յուրացնել նյութը.դա էլ կոչվում է համակցված ուսուցում:

Գործիական հոլովը

Գործիական հոլովը շատ հեշտ է յուրացվում աշակերտների կողմից,քանի որ ունի –ով և

-բ վերջավորությունները:Խմբային աշխատանքի միջոցով կարելի է դիտարկել գործիական հոլովի արտահայտած իմաստները՝տեղ,ժամանակ,միջոց,միասնություն,ձև: Դրանց տարբեր

կիրառությունները աշակերտին սովորեցնում են,որ գործիական հոլովով արտահայտվում են բայական անդամի լրացումները:Սակայն ուսուցիչը գործիական հոլովով գործածված բառերի միջոցով բացատրում է,որ գործիական հոլովով կարող է 16.

դրվել նաև որոշիչը,որը գոյականական անդամի լրացում է՝բրնձով փլավ,ծոպերով օթոց և այլն:Կարելի է անդրադառնալ նաև դարձվածքներին,որոնք կհարստացնեն բանավոր խոսքը:

Գործիական հոլովի կազմության մի շարք օրինաչափություններ կօգնեն սովորողներին շտկել բանավոր խոսքը:

Սխալ	**Ճիշտ**
թոռանով	թոռով
քույրով	քրոջով
տարիով	տարով
այգիով	այգով
լուսով	լույսով

Գաղափար է տրվում նաև -ք հոլովիչով կազմության մասին:Այս հոլովակերտը կիրառվում է –ություն և -յուն ածանցների դեպքում, օրինակ՝արյուն-արյամբ, խաղաղություն-խաղաղությամբ,ուրախություն –ուրախությամբ: Սովորողներին պետք է բացատրել,որ այս դեպքում գործիականը կազմվում է **փոխազդեցական հնչյունափոխության օրինաչափությամբ** :

Թեմայի յուրացումը կարելի է ստուգել գործնական բնույթի ամրակայող վարժություններով:Օրինակ՝ընտրովի թելադրությունից դուրս գրել գործիական հոլովով դրված գոյականները և գրել դրանց ձևաբանական հատկանիշները,շարահյուսական պաշտոնը՝ըստ հոլովական իմաստների:

Ներգոյական հոլով

Ներգոյական հոլովի ուսուցումը համեմատաբար հեշտ է,քանի որ սա ունի սահմանափակ կիրառություն ,ցույց է տալիս այն առարկան,որի ներսում կատարվում

է գործողությունը:Արտահայտում է տեղի և ժամանակի իմաստ,հետևաբար կատարում է տեղի և ժամանակի պարագաների պաշտոն:

Ուսուցիչը բացատրում է, որ կան բառեր ,որոնք չեն հոլովվում ներգոյականով:

1.խումբ

Անձնանուններ և անձ ցույց տվող գոյականներ՝բժիշկ,տղա ,Անուշ,Սարգսյան և այլն:

2.խումբ

Ժամանակ ցույց տվող բառեր՝հուլիս,առավոտ,երեկո, աշուն և այլն:

3.խումբ

- ում,-ություն,-ունդ,-եղեն, արար, -ացի, -եցի, -ցի, -ացու, -իչ, -որդ, -ուհի, -ան, -իկ, -յան,

-յալ և այլ վերջածանցներով կազմված բառերը՝խաղաղություն, բանջարեղեն, մեկնում,աշակերտուհի,վազորդ,կատվիկ և այլն:

4.խումբ

–անք, -ենք, -ոնք, -ունք հավաքականակերտ մասնիկներով գոյականները՝Վարդանանք, պապոնք, աներանք, քեռանք, տատոնք և այլն:

Թեմայի յուրացումը կարելի է ստուգել խմբային աշխատանքի միջոցով, որը հնարավորություն կտա հասկանալ յուրաքանչյուր սովորողի յուրացման աստիճանը:

Բոլոր հոլովների ուսումնասիրությունից կատարվում է «Գոյականի հոլովումը»թեմայի ամփոփում ,և ուսուցիչը կազմակերպում է հարցարանային ստուգում,իսկ որպես ամրակայող վարժություն հանձնարավում է տեքստից դուրս գրել գոյականները և գրել գոյականի ձևաբանական հատկանիշները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով «Գոյականի հոլովների ուսուցում» թեման՝ հանգեցի հետևյալ եզրակացության՝

· Գոյական անվան հոլովի ուսուցումը դպրոցում կարևորվում է թե՛ խոսքիմասային և քերականական առանձնահատկությունների ըմբռնման, թե՛մյուս խոսքի մասերի ուսուցման համար հիմք ստեղծելու առումով:

· Գոյականի շուրջը տարվող և՛ մարզողական, և՛ վերլուծական,և՛ կիրառական վարժությունները նպաստում են գոյականի հոլովների հիմնավոր յուրացմանը:

·Հոլովաձևերի ուսումնասիրության և դասավանդման գործընթացի արդյունավետությունը կապված է համագործակցային մեթոդների և մեթոդական հնարների հետ:

·Գոյականի հոլովները ուսումնասիրելիս լայն տեղ է հատկացվում մարզողական վարժություններին,աղյուսակներին ,դիագրամներին:

·Հոլովների փուլային ուսուցմումը ապահովում է ուսուցման արդյունավետությունը:

·Հոլովաձևերի ոճական կիրառությունները, ոճական շարահյուսական որոշ առանձնահատկությունների իմացությունը նպաստում է աշակերտների բառապաշարի հարստացմանը

Այսպիսով, սովորողների բառապաշարի հարստացումը՝որպես խոսքի զարգացման կարևորագույն բաղադրամաս, կատարվում է հայոց լեզվի դասավանդման ընթացքում,մասնավորապես ձևաբանության ուսուցման ժամանակ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Վ.Առաքելյան, Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Երևան, 1957:

2. Մ.Ե.Ասատրյան Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 2002:

3. .Աղայան Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը,Երևան ,1967:

4. Յու .Ավետիսյան ,Հովհ.Զաքարյան,Ձևաբանություն,Երևան,2008:

5. Ռ.Հարությունյան ,Գոյականի ուսուցման հիմնական խնդիրները ,Երևան,2013: